ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/20/3251-2026

«07 06»..... 2026թ.

«ՊՐՈ ՄԱՔ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
promaqarmenia@gmail.com

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ՊՐՈ ՄԱՔ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01248819) միջև 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/05» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել **«Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական»** աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի՝ մինչև 10.11.2021 թվականը Կատարողի կողմից պետք է հանձնվեին առաջին փուլի (չի ընդունվել Պատվիրատուի կողմից), մինչև 10.05.2022թ, երկրորդ փուլի, իսկ մինչև 10.08.2022թ.՝ երրորդ փուլի արդյունքները, որոնք մինչ օրս կատարված չեն (աշխատանքները՝ այդ թվում փուլային, պատվիրատուին չեն հանձնվել):

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/05» գնման պայմանագրի 2.1.5 կետի ա) և բ) ենթակետերը **2026 թվականի մայիսի 08-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:**

Տեղեկացնում ենք, որ «ՊՐՈ ՄԱՔ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005570115» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 205,000,000 (երկու հարյուր հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարը, տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին, իսկ Պայմանագրով նախատեսված տույժերը՝ 222,115,000 (երկու հարյուր քսաներկու հազար հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Պայմանագրով նախատեսված տույժերի չափերն են.

1-ին փուլ՝ 10.11.2021թ.-04.10.2023թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 1153 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 167,185,000 (մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ (290,000,000 x 0.05% x 1153),

2-րդ փուլ՝ 10.05.2022թ.-07.05.2026թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 1007 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 48,336,000 (քառասունութ միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ (96,000,000 x 0.05% x 1007),

3-րդ փուլ՝ 10.08.2022թ.-07.05.2026թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 942 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 6,594,000 (վեց միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ (14,000,000 x 0.05% x 942):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

5/7/2026

X

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GASPARYAN DAVIT 1407810154 **ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՅՆԱՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կատ. Գնումների բաժնի պետ
Արթուր Բաղդասարյան
Հեռ.՝ 010 59 00 47